

## ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

**ՍԻՐԵՑԵԱԼ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՀԱՅՈՑ  
ՈՐ ՅԵՐՈՒՍԱՂԵՄ, Ի ՅՈՐԴԱՆԱՆ,  
Ի ՄԱՅՐ ՀԱՅՐԵՆԻՔ, ԵՒ Ի ՍՓԻՒՐՈՍ ԱՇԽԱՐՀԻ**

Առաջին ամգամմ է որ, իրեն Հայ Պատրիարք Երուսաղեմի, Քրիստոսի ծննդեամ Բերդեհեմի բարայրէն, եւ այն մասուրէն ուր « մարմնացեալն ի կուսէն, ի խանձարուը պատեցաւ », կ'աւետեմք ձեզի, « Քրիստոս ծնաւ եւ յայութեցաւ »:

**Մեր Աստուածը խաղաղութեամ Աստուածն է:**

Այս օրերւուն սակայն, աշխարհը կործամումի անդումդին տանող դիմակաւոր եւ աստուածակերպ մարդկային հզօրներ, Միջին Արևելքը եւ մարդկութիւնը գեհեմի սպամալիքներւուն ներքեւ կը պահեն:

**Մեր Տէրը՝ Երկինքն ու Երկիրը ստեղծող Աստուածն է:**

Որ Երբէք չի լրեր զմեզ, երբ մենք կարօտ ենք հովանաւոր իր Աջոյն: Իր լոյսը միայն կրմայ փարատել մեզ շրջապատող խաւարը, եւ սանձահարել մարդկութեամ սպառնացող արհաւիքը:

« Որ համբերեսցէ ի սպառ, Շ'ա կեցցէ » ( Մտք. Ժ 22 ):

1991 տարեմուտի Հայկական Սուրբ Շնունդի նրազաւոյցին, մարդոց միտքերը կը չարչըկին նախազուշակ Ենթադրութիւններ ընելով վաղուան մասին, որ չեմ գիտեր թէ ինչ աղէտներ պիտի բերէ աշխարհին:

Այս խամարի բարայրէն, ուր աշխարհի Փրկիչը ծնաւ, կ'առաքենք նոյն յուսատու պատզամը, զօր երեշտակներ աւետեցին դաշտին մէջ խաշնարած հովիւներուն. « Շնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է Օծեալ Տէր »: « Էմմանուէլ »:

Տէրը մեզի հետ է: « Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդին զրկեց, որպէս զի աշխարհը փրկէ կորուտէ »:

Հայ ժողովուրդը հաւատացեր է միշտ, որ Տէրը մեզի պիտի չլրէ: Թէ իսկ մենք բերահաւատիմք, Անոր սէրն ու արդարութիւնը պիտի չը պակսին: Ան իր Երեսը պիտի չը դարձնէ իր ժողովուրդէն, մեր մարդկային տկարութեանց պատճառով:

Եւ հայկական խօրաններու առէն, ինչպէս այս պահուն, պիտի շարութակներ աղաւել. —

« Մայր Սուրբ բարեխօսւա զառ ի թէն զմարմնացեալն Աստուած, Շերել մեզ, ամտես առնել զյանցանս մեր, եւ տայ օգմականութիւն ընդդիմակաց լիմել՝ հակառակամարտիցն ի պատերազմի: Զի լուսիցին պատերազմունք, դադարեսցին յարձակումը թշնամիաց. տմկեսի սէր եւ արդարութիւն ի յերկիի »:

**Մեր Տերը « արդարութեամ արեգակն է »:**

Որքամ որ մտահոգ ենք Սուրբ Երկրի եւ ամոր դրացի Երկիրներու տագմապալից կացութեամբ, նոյնամ կը նմլրիմ մեր սիրու ու հօգիմ, ի լուր եւ ի տես քաղաքական եւ տնտեսական այն տագմապանքներուն եւ հօգեխոռվ անստուգութեանց համար, որոնց ենթակայ են, որոնց կրակներուն մէջէն կ'անցնին մեր Մայր Հայաստանը եւ Արցախը, եւ մեր ժողովուրդի զաւակները, որոնք ցրուած են այլեւալ ազգաց եւ համբավետուրիւններու մէջ:

Խաղաղութեամ եւ արդարութեամ իշխանին Երկրպագու ենք, կէս զիշերուան պաշտամունքի այս պահում, աղօքելով որ մոայլը փարատի, արշալոյսը ծագի, եւ աշխարհի հզօրները պատգամաբէր մոզէր դառնան իմաստութեամ, ազգերու Եղբայրութեամ, Զարին կործանիչ եւ մահաբէր սադրանքները ձախողցնելու, բարութեամ, մարդկային արժանապատութեամ, սերունդներու բարգաւանման, եւ քաղաքակիրք աշխարհի հօգեւոր ժառանգութեամ անունը եւ վայելումը ապահովելու: « Երամի Խաղաղարարաց »:

Աստուածայայտնութեամ տօնը միշտ խորհրդանիշ պիտի մնայ յոյսի, կենսագործ վերանոգման, եւ անխարելի ազատութեամ եւ փրկութեամ:

Հրեշտակներու փառատրութիւնը եւս բալորին շրբունքներէն անպակաս պիտի մնայ եւ պիտի հնչէ, Երկինքն ու Երկիրը, Աստուածն ու մարդերը համայնական Ընդհաշնակութեան մէջ գովերգելով:

« Փառ ի բարձունս Աստուածոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հանութիւն »:

**ՍՐԲԱՀՈՒՆՉ ԶԱՆԳԱԿԱՆԵՐ**

**Սրբահունչ զանգակներ  
Դօղանչեք անդադրում,  
Յուշարար՝ մարդերու  
Ըղձանաց անհատնում:**

**Արհաւիրքն է պատեր  
Սրբագործ Քրիստոս—կոխ  
Լեռներուն ու ծովուն  
Ու մարդոց սրտերուն:**

**Ե՞տ քերէք հրաշագործ  
Շուննչն ու Զայնը Փրկչին,  
Որ աշխարհն՝ աշք—աշքի,  
Սիրտ—Սիրտի, խաղաղի:**

**Դօղանչե՛ք զանգակներ,  
Սրբահունչ, անդադրում,  
Մինչեւ մարդն լըսէ ձեր  
Պատգամներն Յաւերժեն:**